

ԲՈՐՉԱԼՈՒԻ ԳԱԽԱՌ

Ե. Ա. Ա Յ Տ Ե Ա Ն Ի

(Ն Յ Ց Ե Ն Ե Կ Ե Ը)

Լոռում այժմ միաժամանակ ապրում են զենսական կադ-
մակերպութիւնից դեռ ևս բոլորովին դուրս չեկած սերունդ-
ներ, զենսակերպութիւնից դեռ ևս բոլորովի կապուած տոհ-
մեր են կազմում, նաև ապեստական գերդաստաններ և ժամանա-
կակից ընտանիքներ։ Ըստային երկուար՝ սերունդն ու գերդաս-
տանը՝ արտպութեամբ քայլայում են՝ վերածուելով ընտանիքի։

Խօսենիք սրանցից իւրաքանչիւրի մասին առանձին տ-
պանձին։

ՍԵՐՈՒՆԴ ԵՒ ՏՈՀՄ

Սերնդական կամ գենսական կազմակերպութեան կը-
նիքն ամենից աւելի կրում են Խպահատի և Ծրդուի գիւղերի
բնակիչները, որոնք այս կողմերում տիրապետող տարր կազմե-
լով առանձնացած են մնացել։ Խպահատի 60 տանից բազկա-
ցած բնակիչները բաժանւում են երեք սերունդների (զենո).
ա. Մամզուլանք, բ. Խսպիրանք և գ. Թաթուլանք, որտնք սե-
րել են Մամզուլ (Խմամզուլի), Խսպիր և Թաթուլ եղբայրներից։
Խոկ որանք համարում են այն Զահվէրպու որդիները, որը
Բջնուց գաղթելով այստեղ, սպանել է այստեղի տէր՝ Կորշուկին

*) Տես Աղջ. Հանդէս VII. VIII և IX գրքեր.

և նրա եղբայր քահանային^{*)} ու տիրապետել նրա երկրին։ Հետեապէս և այս երեք սերունդներն արենակցական կապով կապուած լինելով միմնանց հետ և ընդունելով միննոյն նախահօրը՝ կազմում են մի տոհմ և կրում Շահվէրդեան տոհմանունը, որ այսօր իր ազգանուն է համարում։ — վախճառն տունն էլ Շահվէրդեան է ստորագրում։

Արդուի բնակիչները կազմում են երկու սերունդ՝ Դայեան և Քալանթարեան։ Երկուսն էլ յառաջացնել են Լոռու-Մելիքեան Դայի և Սմիրիսան եղբայրներից։ Սոազինը պահպանել է իր սերնդական՝ Լոռու-Մելիքեան անունը, իսկ երկրորդը վերակոշուել է Քալանթարեան, որովհետև Սմիրիսանը բալանթարութեան պաշտոն է ստանձնել։ Հետեապէս և՝ այս երկու սերունդն էլ արենակցական կապով կապուած մի տոհմ են կազմում, որի տոհմական անունն այժմ կրում է միայն առաջին սերունդը։

Այժմ տեսնենք իւրաքանչիւր սերնդի ներքին կազմակերպութիւնը։

Ա. Իւրաքանչիւր սերունդ ունի իւր հողագամինը, որ որոշ սահմաններով բաժանուում է միւս սերունդների հողարածիններից։ Այս սերնդական հողարածինը պատականուում է սերնդի բոլոր անդամներին հաւասարապէս, ուստի և իւրաքանչիւր անդամը իրաւունք ունի նրանից օգտուելու, բայց եթէ չի օգտուում, նա իրաւունք չունի այն ծախսելու, ամրող սերունդը թոյլ չի տալ, որ սերնդական հողն ուրիշ սերնդի ձեռն անցնի։ Այսպէս երբ Խսպիրենց սերնդից մինը մի փառիկ արտ էր ծախսել Օձնեցի Ըրովեաններին, Խսպիրենց սերունդը յարձակուել էր Ըրովեանների վրայ և թոյլ չէր տուել, որ վարեն այդ հողարածինը, Միննոյն ժամանակ եթէ հարհան սերնդներից մինը բռնութեամբ խլէ մի սերնդի մի որեէ անդամի զաշար, ամրող սերունդն ոտի է կանդնուում պաշտպանելու նրան։ Սերնդին պատկանող հողարածինի վրայ եղած անտառից, արօտա-

^{*)} Մինչև այժմ էլ այն փոքրիկ լճակը, ուր ձգուած է եղել այդ քահանան, կոչում է ըրիցագօր։

տեղուց, ընկույզի և այլ պատատու ծառերից օգտառմ են բար անդամները հաւառար իրաւունքով։

Եյս կարգն էր տիրում մինչև առաջին հոգաշափութիւնը, (1874 իւ.) որ հոդերը բաժանելով անհատների վրայ՝ նըանց իր անձնական սեպհականութիւն յատկացրեց։

Ա. Նախարհօք պաշտամնութը, նրա գերեզմանը որպէս ուխտատեղի համարելն աւելի որոշ կերպով մնացել է Լօսիս-Մելիքեանների մէջ։ Մրանք իրանց նախահայր համարում են Ա. Օհան Օձնեցուն, որի աճինի վրայ եկեղեցի են կառուցել և նրա գերեզմանն էլ պաշտում են, նրա հողը իրեն օխնութիւն, գեղ, գործածում համարեա ամէն տեսակ հիւանդութիւնների գէմ։ Նորապատկները, եթէ նոյնիսկ ուրիշ զիւզում կտարատծ լինեն պատկապրութիւնը, նախ և առաջ գնում են համբարելու Օհան Օձնեցու գերեզմանը և Ըգալօ Քալանթարեանի տան օգախը, որ աւանդարար համարում է իրենց նախարհօք բնակաբանը։ Ամեն տարի, Զատկի Կանաչ կիրակէին Լօրիս-Մելիքեան ամբողջ տոհում տօնում է Ա. Օհան Օձնեցու տօնը, իրեն միջից դրամ հաւաքելով հասարակական մատաղ է կարում և պատարագ մատացանում ու հոգեհանգիստ կատարում Ա. Օհան Օձնեցու գերեզմանի վրայ։

Դ. Խըրապանէլիոր սերնդի ըրութը անդամներն իրատմաք շունչին միմանց ննու ասմունանալու։ Որոշեալ շափով արգելում է նրանց նաև իրենց տոհմին պատկանող սերնդների անդամների հետ խնամութիւն անել Բայց երբ մինը արուժառանդ չունենալով պէտք է իւր հարստութիւնը իւր աղջկան տար, այսպիսի գէպքում սերունդը թոյլ է տապիս իւր անդամներից մինին ամսունանալու այդ աղջկայ հեռ, որպէս զի այդ հարստութիւնը սերնդի միջից դուրս չկայ։ Եյսովէս Քալանթարեան Ռ. միակ ժառանդ դուռարը ամսունացել է նոյն սերնդից Բ.-ի հետ, մերժելով շատերին։ Խնչովէս և Ա. Շահնդիքդեանի երկու դուռարներն ամսունացել են իրենց սերնդից՝ Ե. և Ի. եղբարբրդիների հետ։

Ե. Մերունդը ժառանգում է անժառանգ անդամի ամբողջ կայրը և յատկացնում կամ եկեղեցուն, կամ չքաւորնե-

րին և կամ հասարակութան մի գործի. այսպէս՝ Մելիք ելիդրար և Մելիք Դարրիէլ Լօրիս-Մելիքեանները, ինչպէս և Մելիքսեղեկ Քալանճարեանը ժառանգ չունենալով դանազան ժամանակներում վերանորոգել են Ս. Օհան Օձնեցու վանքը:

Ե. Սերունդը հոգում՝ է իւր կացուտ անդամների կարիքները փոխադարձ օգնութեամբ։ Այսպէս օրինակ, երբ մինը տուն է շինում՝ սերնդի անդամներն առանց մի որի է վարձատրութեան փայտ, քար են կրում, մի գիշեր հաւաքրում և այդ նոր շինուող տան միջի հողը դուրս ածում, կտուրը կոխսկրտում, որ հողը ամբաղնդուի։ Երբ մինը ցանկտում է իւր ննջեցեալի վրայ գերեզմանարար ձգել,՝ դարձեալ սերնդի անդամները հաւաքրում զնում են այդ գերեզմանարարը բերելու։ Երբ մինի տաւարը կորչում է՝ սերունդը խմբովին զնում է որոնելու։

Միմեանց դորդիքներ, ձի, լ.շ. հանգերձեղին ձրի փոխ տալը սովորական են։

Միննոյն կերպ և կանացք են վարւում, հարսանիքի բրինձը ընարելիս, բուրդ զգելիս, էրիշատ անելիս, պարտէղները քաղհանելիս, բաղարազին հարս ու աղջիկ սիրով հաւաքրում են, խօսելով, ծիծաղելով զործը կտաւարում և միմիայն մի ճաշով հիւրասիրուելով ցրում։

Մերունդը օգնութեան է համնում թէ ուրախութեան և թէ ախրութեան ժամանակ։ այսպէս՝ հարսանիքի ժամանակ ևկանչիք միջոցով դրամական նուէրներ տալով թեթևացնում է նրա ծախքերը, փարերը ժամանակ «ծննդբաւաթ» տանելով ծննդկանին՝ օգնում է նրան լաւ մննդուելու, ննջեցեալի «եօթի» և Ս. Խաչի տօնին տրուած հոգու հացի ժամանակ դառներ և զանազան թիսուածքներ տանելով՝ պակասիցնում է ծախսելը։

Մերունդը օգնութեան է համնում ամէն մի զժբաղդ գլացրում, այսպէս երբ մինի դէզը վառւում է, մինը սայլը լծում է և սկսում ամէն մի տանից խոտ, հասկ հաւաքի և տալ նըրան։ Երբ մինը զրկւում է տաւարից՝ շատերը մի-մի գտու, հորթ են նուիրում, որ պահի, մեծացնի, տաւարի տէր դառնայ։ Խակ ծաւորներին թուխս ընկած հաւ փոխ տալը շատ



սովորական է, Ազքատ կինը մինի թուխս ընկած հաւը ժամանակաւորապէս վերցնելուց յետոյ՝ դրկիցներից հաւկիթներ է հաւաքսամ, թուխս գնում և վասնեների, հաւերի տէր դառնում, Այրի, անտէր կնոջ արտերը սերունդն է ցանում, հնձում, կիրակի և տօն օբերին:

Զ. Սերունդը պաշտպանէ հանդիսանում իւր ամէն մի անդամին, վրէժիննդիր լինում նըա արեան: Երբ մինը կռուի է բռնւում մի ուրիշ սերնդի անդամի հետ, ամբողջ սերունդը երկու կողմից օգնութեան են համնում և անհատական կռիւը դառնում է սերնդական և երբեմն նոյնիսկ տոհմական: Ո՞քան կռիւներ են տեղի ունեցել և ունենում Մամուլնեց, Խոպիրենց և Թաթուլնեց և կամ սրանց ու Քալանժարեանների մէջ, որնց սկզբնապատճառը երկու անհատոների կռիւն է եղել: Այսպէս՝ Ա. Խոպիրենցը պահանջում էր Գ. Թաթուլեանից, որ կալը հեռացնէ իրեն տան մօտից, սակայն վերջինս շէր կամենում, բանը համնում է կռուի, որին մասնակցում են թէ Խոպիրենց և թէ Թաթուլնեց ամբողջ սերունդը:

Սերնդական և երեմն նոյն իսկ տոհմական կռիւների պատճառ դառնում են ազջիկները: Երբ մի երիտասարդ մերժումն է ստանում մի ուրիշ սերնդի պատկանող աղջկայ ձեռքն ստանալու, ամբողջ սերունդը կարծես վիրաւորուած մի քանի կտրիճներ է տալիս, որ զնայ փախցնէ: Եւ երբ մի զիշեր լուր է տարածում, թէ աղջիկը տարածն, իսկոյն այս սերնդի և երբեմն նոյն իսկ տոհմի կտրիճները ձի են հեծնում, հրացան վերցնում և ընկնում փախցնողների յետեից: Սկսում է հրացանաձութիւնը և եթէ մարդ է սպանում, սերունդն ամեն միջոցի դիմում է արեան վրէժը լուծելու, սպանողի սերնդից մինին սպանելով:

Է. Սերնդի մի առանձնայատկութիւնն էլ այն է, որ առանձին գերեզմանատուն ունի, և ամեն մի անհատ փափառում է այդ սերնդական գերեզմանատունը, իրենց նախնիների մօտ թաղուել: Եւ այս է պատճառը, որ օտար տեղում մեռնաղներին բերում են իրենց սերնդական գերեզմանատանը թաղելու, ինչպէս օր. Միք. Քալանթարեանի մար-

մինը Բագրուից բերին Սրբուի, Յարութ. Շահվէրդեանինը՝ Թիֆլիսից Իգանատ.

Չատ անգամ սերնդական գերեզմանատունը կից է լինում տոհմական գերեզմանատան, բայց և այնպէս՝ միմեանցից անշատ. Այսպէս Լօրիս-Մելիքիսեան՝ տոհմինը Ս. Օհան Օձնեցով վանքի գաւթումն է գտնուում, միայն բռն Լօրիս-Մելիքիսեանինը նրա հիւսիս արևմտեան, իսկ Քալանթարեանինը՝ արևելահարաւային մասում. Շահվէրդեան տոհմինը գիւղի մօտ, բայց միմեանցից փաքր ինչ հեռու, երեք մասի՛ Մամդուլնց, Խոպերենց և Թաթուլինց՝ բաժանուած:

Պէտք է նկատել նաև, որ կանայք թագում են ոչ թէ իրենց, այլ ամուսինների սերնդական գերեզմանատանը.

Ը. Սերունդը տիբապետելով մի երկըի, այդունդի թնակիշներին կամ յետոյ եկածներին իրենից ստոր է համառում, չի թոյլ տայիս մասն ունենալու իւր հողից, անտառից, ամօթ է համարում նրանց հետ խնամութիւն անել, թոյլ տալ նրանց իրենց սերնդական գերեզմանատանը թաղումլու: Այսպէս՝ Իգանատ զիւղում բացի Շահվէրդեաններից, ապրում են նաև մի քանի տուն ուրիշ զիւղացիներ, Շահվէրդեանները, որպէս աիրապետող՝ բարձր, ազնուական են համարել իրենց և կառավարութեան էլ այդպէս ընդունել տուել, իսկ նախկին ընկնուած ընիկներն ու եկորները համարում են ռամիկներ. Մրանք սեպհական հող չունին և կապալով են վերցնում Շահվէրդեանների հողերը և աշխատում նրանց համար. Աշ մի Շահվէրդեան չէր ամուսնանում սրանց հետ և ոչ էլ թոյլ տայիս որ իրենց գերեզմանատանը թագուին, իրենց սերնդական կամ տոհմային գործերին միջամտեն.

Եւ եթէ մի պառաւած ազգիկ կամ մի այրի կին կամեցել է ամուսնանալ մի ռամկի հետ և կամ իթէ մինը կամեցել է մի ռամկի տղայ սրգեզրել կամ տնիկեսայ բերել և նրան տալ իւր ազգանունը՝ սերունդը միշտ միջամտել է, մնդ մասամբ արգիլել և երբեմն միայն թոյլ տուել. Այսպէս՝ օրինակ Քալանթարեանի սերունդը արգելը է լինում, որ այրի Փ. ամուսնանայ Զ.-ի հետ, աշ էլ Թաթուլնց սերունդը կամենում է

թողնել, որ հասայու այրին հաղբատեցի մի ռամկի տընփեսայ բերի:

Թ. Սերումնդը իւր ներքին գործեցը վարուա՞ է սերընդական ժողովներում, ուր հաւաքում են զինաւորապէս ծերունիներ և ուր երբեմն մուտք են գործում և պատաւներ։ Այսպէս՝ օրինակ, երբ միմնանց հետ կուռում են, երբ մէկին մի դժբաղբութիւն է պատահում, երբ եղբայրները կամնաւմ են միմնանցից բաժանուել, երբ ամբողջ սերնդին պատկանող ընկուպենիները կամ ուրիշ ատզատու ծառերը պէտք է թափ տալ ու բաժանել իրենց մէջ՝ տղամարդիկ և մանաւանդ ծերունիները հաւաքում են և խորհրդակցութեամբ որոշումներ անում։

Փ. Ցհմային ընդհանուոր ժողովներ հազիւ են պատահուա, ամբողջ տոհմին վերաբերեալ ինպիրները լուծելու համար սովորաբար իւրաքանչիւր սերնդից որոշեալ թուով մարդիկ են ընտրում, որոնք և ժողովներ անելով խորհրդակցում են միմնանց հետ, աշխատելով իւրաքանչիւրը պաշտպանել իւր սերնդի շահերը։

Այսպէս Շահնվէրդեան տոհմը կամնալով մի եկեղեցի ունենալ, իւրաքանչիւր սերնդից ընտրել է երկու հոգի, որոնք պիտի հոգան այդ մասին։ Երբ սրանից 25 տարի առաջ կամնում էին զուր բերել գիւղում, իւրաքանչիւր սերունդը ընտրել է երեք հոգի, որոնք և զուրի են բերել տոհմի ցանկութիւնը։

ՆԵՐՊԵՏՈՒԱՆ ԴԵՐԴԱԾՈՒ

Նահապետական գերդաստանը, որ ծագել է սերնդից, նրա մէջ զարդացել է անհատական սեպհականութեան գաղափարը, նկատելի է կօսու ոչ իմէ մի քանի, ինչպէս սերընդինն էր, այլ բոլոր գիւղերում։ Սակայն նահապետական մեծ գերդաստանը արդէն այստեղ անհետացել է, մնացել է միայն միշինը։ 60—70 անդամից բաղկացած գերդաստան այլ ես չը կայ, կայ միայն 25—30 անդամներից բաղկացած, ինչպէս օրինակ Օձունում Վարդանանց գերդաստանը։